Հավելված N 2
Պրոբացիայի ծառայության պետի
2025 թվականի հուլիսի 10-ի
N 231-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կենտրոնական մարմնի կազմմեթոդական և վերլուծական բաժինը (այսուհետ՝ Բաժին) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, Ծառայության և սույն կանոնադրության հիման վրա:

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Բաժնի նպատակն է Ծառայության մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ուսումնասիրության, տեղեկանքների կազմման, խորհրդատվական, մեթոդական օժանդակության ու վերլուծական նյութերի պատրաստման աշխատանքների կազմակերպումը:

4. Բաժնի խնդիրներն են.

1) ապահովել Ծառայության հիմնական մասնագիտական ստորաբաժանումների գործունեության՝ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանության աշխատանքները, ինչպես նաև աջակցել վերջիններիս նկատմամբ Ծառայության պետի վերահսկողական լիազորությունների իրականացմանը.

2) իրականացնել Ծառայության ընթացիկ գործունեության ուսումնասիրությունը և արդյունքների վերլուծությունը.

3) ապահովել Ծառայության երկարաժամկետ ու կարճաժամկետ նշանակության խնդիրների բացահայտումը՝ վերլուծելով և գնահատելով դրանք.

4) իրականացնել Ծառայությունում հաշվառված շահառուների անձնական գործերի վարման նկատմամբ մշտադիտարկումը.

5) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ընթացք տալ Բաժնի գործունեությանն առնչվող ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումներին և բողոքներին:

3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի գործառույթներն են.

1) Ծառայության պետի հանձնարարությամբ հիմնական մասնագիտական ստորաբաժանումների ընդհանուր գործունեության ուսումնասիրությունը և համակարգումը.

2) Ծառայության հիմնական մասնագիտական ստորաբաժանումների կողմից օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմանը, դրանց պատշաճ կատարման նկատմամբ Պրոբացիայի ծառայության պետի վերահսկողական լիազորությունների իրականացմանն աջակցումը.

3) Ծառայությունում հաշվառված շահառուների անձնական գործերի վարման նկատմամբ մշտադիտարկումը, Բաժնին փոխանցման և արխիվացման ենթակա գործերի ընդհանուր ուսումնասիրությունը.

4) նախատեսված և չնախատեսված այցելությունների կազմակերպումը շահառուի բնակության կամ պատժի կրման վայր՝ պատիժների, անվտանգության միջոցների և այլընտրանքային խափանման միջոցների՝ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան պատշաճ կատարումը ստուգելու նպատակով.

5) Ծառայության պետի հանձնարարականների, ցուցումների նախագծերի մշակումը.

6) օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները պատշաճ կատարելու նպատակով խորհրդատվության տրամադրումը և մեթոդական օգնության ցուցաբերումը հիմնական մասնագիտական ստորաբաժանումներին.

7) Ծառայության պետի հրամանի հիման վրա ծառայողական քննությունների անցկացումը կամ դրանցում մասնակցությունը.

8) միջազգային և տեղական գործընկերների հետ փոխշահավետ համագործակցային կապերի ստեղծման, համակարգման, մշակման և զարգացման աշխատանքների իրականացումը.

9) ոլորտին վերաբերող խնդիրների վերհանման, ուսումնասիրման, վերլուծման աշխատանքները.

10) Ծառայությանն ուղղված և Բաժնի գործունեությունից բխող դիմումների, բողոքների, հաղորդումների քննությունը և դրանց պատասխանների նախապատրաստումը, ինչպես նաև համապատասխան հանձնարարականի հիման վրա դրանց վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացումը.

11) Ծառայության պետի կողմից տրված այլ հանձնարարականների կատարումը.

12) Բաժնի գործունեությունից բխող օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացումը:

4. ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Բաժնի գործունեությունը համակարգում է Ծառայության պետը:

7. Բաժինը գործում է Բաժնի պետի անմիջական ղեկավարությամբ:

8. Բաժնի պետն անմիջական հաշվետու է Ծառայության պետին:

9. Բաժնի գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Ծառայության պետը, եթե օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այլ բան նախատեսված չէ:

5. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

10. Բաժնի կառուցվածքում ընդգրկված չեն ներքին կառուցվածքային միավորներ: